ՄԻՖԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆԻ «ՎԻՇԱՊ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԲԱԳՈՅԱՆ ԱԼԼԱ
ԳՊՀ դասախոս

Չարի և բարու պայքարը բնորոշ է աշխարհի բոլոր ժողովուրդների բանավոր և գրավոր ստեղծագործությանը: Այն հիմնված է աշխարհի մասին դուալիստական ըմբռնումների վրա: Տարբեր ժամանակներում աշխարհի տարբեր ժողովուրդներ իրենց անցյալի ու ներկայի գրականության համար արժանի աղբյուր են ընտրել հնագույն առասպելները, որոնցից շատերը մինչև այժմ էլ կենցաղավարում են, վերաիմաստավորվում, վերապրում իբրև այլաբանական պատկերներ: Իսկ ո՞րն է գրականության բուն նպատակը, եթե ոչ մարդու ինքնաճանաչողությունն ու դրան տանող կարևոր հարցադրումները: Հեղինակներից շատերն ընտրում են իրականության գեղարվեստական վերապատկերման, ընդհանրացման և տիպականացման ճանապարհը, ոմանք էլ դիմում են այլաբանությանը՝ միֆական, երևակայական, ֆանտաստիկ պատկերների, որոնք կօգնեն հասկանալ գրողի մտահոգությունը՝ կապված ներկայի, արդիական խնդիրների հետ: Եվ միշտ չէ, որ հաջողվում է հնչած հարցադրումներին տալ որոշակի պատասխան, բանաձև, միջոց, ճանապարհ՝ խնդրահարույց իրավիճակներից ելք գտնելու համար:

Ահա այդպիսի ոչ միանշանակ ստեղծագործություն է Վրթ.Փափազյանի «Վիշապ» զրույցը, որն ունեցել է հետաքրքիր ճակատագիր, հայտնի մոտիվների ինքնատիպ միահյուսում, բավականին խոր հարցադրումներ, որոնք, մեր կարծիքով, այսօր էլ արժանի են ուշադրության և նորովի մեկնաբանության: Զրույցն առաջին անգամ հրատարակվել է 1903թ. Բաքվում առանձին գրքով, 1904թ. այն զետեղվել է «Զրույցներ» ժողովածուում, իսկ 1911թ. այս զրույցը թարգմանվում է ռուսերեն և հրատարակվում Սանկտ-Պետերբուրգում «Պրոլետարական գրադարան» մատենաշարով: Սակայն շուտով գրքույկի վրա կալանք է դրվում՝ հիմք ընդունելով գրքում առկա «հանցավոր գործողությունների նշանները»[1]: Բարեբախտաբար, հեղինակին հաջողվում է խուսափել կալանավորումից:

---

[1] Փաստաթուղթն առաջին անգամ հրապարակել է գրականագետ Ս.Արեշյանն իր «Армянская печать и царская цензура» գրքում: Տե՛ս Ա.Կ.Օհանյան, Վրթանես Փափազյան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1976, էջ 240:

Վրթ. Փափազյանի «Վիշապ» զրույցը քննելիս բացահայտվում են որակներ, որոնք միչ օրս ուշադրությունից դուրս են մնացել, և հետազոտողի բնորոշումը, թե՝ «հեղափոխական հայ արձակի առաջին գլուխգործոցներից մեկն»[1] է այն, այսօր ավելի շատ ստվեր է նետում գրվածքի բովանդակային խորության, հարցադրումների լրջության և համամարդկային խնդիրների վերհանման վրա, քան արժևորում է այն: Իրականում Փափազյանի այս և դարասկզբին գրված մի շարք այլ զրույցներ ու լեգենդներ հայ գրականության մեջ նեոմիֆոլոգիզմի դրսևորման կարևոր նմուշներից են:

20-րդ դարի գրականությունն աչքի է ընկնում իր բազմազան դրսևորումներով և տարբերվում է անցյալի ամբողջ գրականությունից: Ռոմանտիկական գրականության մեջ արդեն ստեղծված առասպելաբանական (միֆոլոգիական) դպրոցին, որի ներկայացուցիչներն իրենց ուսումնասիրության նյութ էին դարձրել ազգային առասպելաբանությունը և բանահյուսությունը[2], փոխարինելու է գալիս նեոմիֆոլոգիզմը՝ ռեմիֆոլոգիզացիա կամ դեմիֆոլոգիզացիա նշանակություններով[3]: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Փափազյանի զրույցները, որոնցում գրողը մերթ կարծես ընդգծում է ժողովրդականն ու գրականը տարանջատող սահմանը. «Այստեղ կանգ է առնում ժողովրդի զրույցը և այստեղ էլ սկսում է գրողի հանդգնությունը…» («Պայտարի հոգին»), մերթ բերում է ամփոփիչ մի վերջաբան՝ իբրև եզրահանգում. «Այդպես էր, որ ընկավ արծիվը բարձր կատարներից, և այդ այն օրը, երբ մտածեց ստամոքսը կշտացնելու համար թևերը ծալել և իջնելու առաջին քայլն անել…» («Ստամոքսի համար»), կամ իբրև նկարագրված սկզբնապատճառով պայմանավորված իրողություն՝ առասպելականը կապելով իրականի հետ. «Այդ օրվանից ահա՝ պատերազմիկ զորեղն արյունի մեջ է որոնում Արդարությունը, հարուստը՝ ոսկու, և թշվառը, նստած իր վշտերի մոտ, արցունքով մեծացնում է Բողոքին, որ նա՛ վերակոչե աշխարհում կորսված Արդարությունը…» («Կորսված արդարություն»), կամ՝ «Այդ օրվանի՛ց ահա ամբոխը պաշտում է հրեշին որպես բարերարի», բայց և չի կորցնում լավատեսությունը՝ նշելով, որ եղան մարդիկ, ովքեր երազ էին տեսել, որ գալու է վիշապին սպանողը («Վիշապ»): Այստեղ հարկ է նշել Փափազյանի՝ Ռաֆֆուց կրած ազդեցությունը թե՛ «խենթի» կերպարը կերտելիս, թե՛ ստրկության

---

[1] Օհանյան Ա.Կ., Վրթանես Փափազյան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1976, էջ 234:

[2] Սեմիրջյան-Բեքմեզյան Ա., Գրականություն և միֆ: Գրականության տեսության արդի խնդիրներ, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016, էջ 120:

[3] Նույն տեղում, էջ 122:

ժամանակավոր բնույթն ու ժողովրդի ժառանգած քաջազնական ոգու զարթոնքը պատկերելիս և թե՛ գրվածքը լավատեսական երազով ավարտելիս[1]:

«Վիշապ» զրույցի պարագայում գործ ունենք *միֆավերաիմաստավորման* հետ, երբ ժողովրդական բանահյուսության մեջ ամենատարածված սյուժեներից մեկը միահյուսվում է գեղարվեստական գրականության հետ՝ արձագանքելով հասարակական կյանքի իրողություններին: Անշուշտ, այս ստեղծագործությունը պետք է դիտարկել Փափազյանի ամբողջ գրական ժառանգության համատեքստում, որտեղ կարմիր թելի պես գրվածքից գրվածք է անցնում կորսված արդարության, հասարակության բևեռացման, լլկված ու անօգնական, հաճախ ստրկամիտ ու հանդուրժող խեղճերի և շահամոլ ու քմահաճ կեղեքիչների հակադրության բազմաթիվ պատկերները: Բացի դրանից՝ գործողությունների զարգացման ընթացքում զարմանալի ձևով պատկերները ձեռք են բերում պարադոքսալ երանգներ՝ արտահայտելով հեղինակի անկումային տրամադրությունները: Մի դեպքում առվակը քանդում է պալատները և միաժամանակ ծաղկեցնում դաշտերը («Առվակը»), մեկ այլ դեպքում «խենթն» ավելի խելացի է գտնվում, քան նրան ծաղրող ու նախատող «խելոք մարդիկ» («Վիշապ»), երրորդ դեպքում Արդարությունը չի խղճում հուսաբեկ թշվառին և խուսափում է նրանից («Կորսված արդարություն») և այլն: Ժողովրդական բանահյուսության ավանդույթներին հավատարիմ՝ «Վիշապում» գրողն ուրվագծում է միֆական ժամանակի և միֆական տարածության պատկերները՝ ապահովելով գործողությունների զարգացման առասպելախառն, ֆանտաստիկ միջավայրը, իսկ վերջաբանն էլ, թվում է, հուսադրող է, բայց՝ ոչ, դա ընդամենը երազ է:

Փափազյանի «Վիշապ» զրույցի հիմքում ընկած է աղբյուրի ակունքում նստած վիշապի մասին բանահյուսական հայտնի պատումը: Սակայն միֆական այս զրույցի սյուժեն և հատկապես՝ գաղափարը, դուրս են գալիս բանահյուսության շրջանակներից՝ ձեռք բերելով արդիական նշանակություն: Փորձենք տալ սյուժեի ընդհանուր ուրվագիծը. հեռավոր անցյալում (ժամանակն անորոշ է) մաքուր, հորդառատ մի գետի ափին ծաղկում էր «քաղաքի նմանող մի գյուղ», որտեղ ապրում էին երջանիկ մարդիկ՝ վայելելով «ջրի բաշխած հարստությունը»: Բայց մի օր գետի ջուրն սկսում է նվազել, *որից տուժում է ամբողջ երկիրը*: Պատճառը հետազոտելու համար գյուղացիները խմբեր են կազմում և շարժվում գետի հոսանքն ի վեր: Տասնհինգ օր փնտրելուց հետո բոլոր հինգ խմբերը հավաքվում են ակունքի մոտ՝ խորհրդակցելու, և առաջարկում են «ցնորական, երեխայական, առժամանակյա» միջոցներ, որոնք չէին կարող խնդրին լուծում տալ: Մի

[1] Փափազյանի՝ Ռաֆֆուց կրած ազդեցությունը նկատելի է մեկ այլ գրվածքում ևս՝ «Զոհակ» լեգենդում, որտեղ գրողը բերում է կայծերի այլաբանությունը:

երիտասարդ միայն, «երևակայող մի «խենթ»», վստահեցնում է, որ ջրի նվազելու պատճառը լեռներում բույն դրած վիշապն է, և կրկին արժանանում հայրենակիցների ծաղրին: Նա զգուշացնում է, որ վիշապը, «կլանելով ջրերը՝ ինքը կմեծանա, նրա ծարավը կաճի, խմելու փափագը կավելանա և այլևս ջուր չգտնելով, կգա մեր արյունը խմելու...»[1]: Եվ որքան ջանում էին լռեցնել «խենթ մարդուն», այնքան նա ավելի համառորեն էր պնդում. «Քանդեցե՛ք ակունքը և կտեսնեք. հետազոտեցե՛ք, խորքե՛րը մտեք և պիտի հասկանաք... Ծնվել է նա, կարճամի՛տ եղբայրներ, և ծնվել է մե՛ր միջից, մեզնի՛ց է ծնվել...»[2]: Մարդկանց քրտինքից ծնված վիշապի գաղափարն աստիճանաբար ընդունելություն էր գտնում «պակասամիտ», «խենթանման»[3] մարդկանց շրջանում, և երբ հորդահոս գետից մնում է միայն չնչին մի առվակ, խենթի առաջնորդությամբ «հարստահարողի դեմ կռվի են» գնում: Նրանց միանում են համագյուղացիները՝ հետաքրքրությունից դրդված: Բայց տեղ հասնելով՝ մարդիկ բահերն ու բրիչները մի կողմ են դնում և նստում ծրագիր կազմելու, որը կրկին անհանգստացնում է խենթին. «...Նրա գլուխը պիտի ջախջախել: Սրանից պարզ ու կտրուկ միջոց չկա: Ոտքի՛ ելեք, և գործը սկսենք»[4]: Մարդիկ հապաղում են՝ հիմնավորելով, որ պետք է նախ գնահատել սեփական ուժերը, և խենթը հիշեցնում է, որ այդ վաղուց պետք է արվեր, որ տարիների ընթացքում վիշապն ավելի է մեծացել,և «շա՛տ դժվար է ոչնչացնել նրան, առանց զոհեր տալու, առանց արյուն թափելու»[5]: Մինչ գյուղացիները մտածում էին, վիշապը ժամ առ ժամ, րոպե առ րոպե մեծանում էր, ուստի խենթը միայնակ է գնում հրեշին որոնելու: Մինչև երեկո փորում է խենթը, և քանի գնում, սաստկանում են հրեշի սարսափազդու ձայները: Գյուղացիները հեռվից են դիտում՝ սպասելով, թե ի՞նչ է լինելու: «...Ոչ ոք սիրտ չարավ մի քայլ անելու, խենթին օգնության ձեռք տալու: Ամեն ոք իր կաշվիցն էր վախենում, ամեն ոք կամենում էր վտանգից հեռու լինել թեկուզ ծարավ, թշվառ ու կիսամերկ մնալ միշտ»[6]: Խենթի մի վերջին հարվածից հետո երևում է վիշապի սոսկալի գլուխը, որ կլանում էր ջուրը, և այն, ինչ հոսում էր առվով, «նրա շրթունքների անկյուններից դուրս ելնող թափցուկն էր միայն...»: Տեսնելով խենթին՝ որոտաձայն վիշապն սկսում է խոսել մարդկային լեզվով՝ ասելով, որ ինքը գոյություն է ունեցել դեռևս այն ժամանակ, երբ «առաջին մարդը ճնշեց իր

---

[1] Վրթ.Փափազյան, ԵԺ հինգ հատորով, հտ. 3, Երևան, 1958, 367:
[2] Նույն տեղում:
[3] Հեղինակն ինքն է այս բառերը դրել չակերտներում՝ ընդգծելու համար իր ասելիքը:
[4] Վրթ.Փափազյան, ԵԺ հինգ հատորով, հտ. 3, Երևան, 1958, 369:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:

եղբորը, խլեց նրա ունեցածը, երբ Կայենը սպանեց Աբելին»[1], և որ միայնակ խենթերի նա շատ է կուլ տվել, մինչդեռ նրան կարող է հաղթել միայն ամբոխը, բայց այն հիմա ահաբեկ՝ դողում է իր ոտքերի առաջ: Խենթը դեպի վիշապն է նետում ձեռքի բրիչը, բայց դիպչելով ժայռին՝ ջարդոտում է այն՝ վիրավորելով համագյուղացիներին: Զայրացած ամբոխը կրկին քարկոծում է խենթին՝ արժանանալով վիշապի դրվատանքին, որն ասում է, թե ինքն է նրանց բարերարը և ջուր կտա այնքան, որ ծարավից չմեռնեն: Գյուղացիները հեռու են քշում խենթին, շնորհակալություն հայտնում վիշապին և վերադառնում գյուղ: Երկն ավարտվում է ամփոփիչ պարբերությամբ. «Այդ օրվանի՛ց, ահա ամբոխը պաշտում է հրեշին որպես բարերարի. շինում է նրա համար տաճարներ, իսկ նրա դեմ խոսող խենթերին քշո՛ւմ է դեպի լեռների բարձունքները…»[2]: Այսպիսի ավարտն այնքան էլ հուսադրող չէ, ուստի հեղինակը բերում է ևս մի վերջաբան, ըստ որի մարդիկ երազ են տեսնում, թե շուտով գալու է վիշապին սպանողը՝ «հուժկու մի մարդ՝ կաշվե գոգնոցով, կոշտացած խոշոր ձեռքերով և ձեռքին մի մեծ կռան բռնած…», միակ մարդը, որից կարծես վախենում էր վիշապը:

Փափազյանի այլաբանական այս զրույցը շատ ավելի խորն է, քան կարող է թվալ առաջին հայացքից: Այն սերտորեն կապված է ինչպես հնագույն առասպելների և հայկական էպոսի, այնպես էլ ռոմանտիկական գրականության հետ: Հնագույն առասպելներին է վերաբերում ջրի պաշտամունքի հետ կապված այն հավատալիքը, ըստ որի ջրի սակավությունը կապվում է ակունքին նստած վիշապի գոյության հետ, որը ժողովրդին ջուր թողնելու համար զոհեր է պահանջում: Ինչ վերաբերում է էպոսին, ապա զրույցում հանդես եկող որոշ կերպարներ և գործողություններ ուղղակի աղերսվում են նրան, մասնավորապես հենց գլխավոր հերոսների բնորոշումը՝ էպոսում՝ «ծուռ», զրույցում՝ «խենթ»: Բացի դրանից՝ հերոսներն աչքի են ընկնում ոչ անհիմն շտապողականությամբ: Այսպես, «Սասնա ծռեր» էպոսի երկրորդ ճյուղում յոթնամյա Մհերն ուզում է օր առաջ մեծանալ, ինքնահաստատվել, ուժ և հմտություն ձեռք բերել՝ չարի դեմ դիմակայելու.

Քանի մեր տուն դեռ մարդ չկա՝
Դևեր մեր տան վերա տի գան, վնաս տի տան:
Աղեկ է, որ հիմիկվանե պատրաստ ըլնեմ՝
Թըշնամու դե՛մ կայնեմ: [3]
Մեկ այլ հատվածում Մհերը շեշտում է՝

[1] Նույն տեղում, էջ 371:
[2] Նույն տեղում, էջ 372:
[3] Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 98:

...Մեր մեծ պապեր
Մեզ էնպե՛ս են խրատ տվե,
Որ թշնամու դեմ էլնելուն պես՝ տի կռվենք...[1]

«Վիշապ» զրույցի հերոսը ևս հենց սկզբից հորդորում է ժամանակ չկորցնել, գործի ացնել, գտնել և ոչնչացնել ջրարգել վիշապին: Մեկ այլ դրվագում Միերը ձիուն շալակած տանելիս դառնում է բիթլիսցիների ծաղրի առարկա, սակայն ուշադրություն չի դարձնում: Այդպես և «խենթը», որին ոչ միայն ծաղրում, այլև քարկոծում են ու հեռու քշում, սակայն նա մնում է անհողդողդ: Բացի դրանից՝ ջրի սակավանալու և «խենթի»՝ վիշապի դեմ միայնակ գնալու դրվագը հիշեցնում է «Սասնա ծռերի» երկրորդ ճյուղի այն հատվածը, որտեղ տասնհինգամյա Միերը, չիմանալով անգամ՝ ինչ է առյուծը, միայնակ գնում է նրա դեմ.

Միերի հետ գնացած մարդիկ հեռու կանգնան.
Միեր մենակ գնաց:

Այդպես և «խենթը». բրիչը վերցնում, միայնակ գնում է վիշապին գտնելու և գտնելով նրան, թեև ապարդյուն, միայնակ է փորձում ջախջախել հրեշի գլուխը:

Առավել համահունչ են Միերին և Սիպտակ Դևի աղբյուրի ակունքը պահպանող երկու դև-աժդահաների ընդհարումը պատկերող տեսարանը, հենց Սիպտակ Դևի՝ հեռավոր լեռներում մի քարայրի մեջ բնակվելու և նրա զորությունը սև եզանով պայմանավորված լինելու պատկերները: Հիշենք, որ զրույցում վիշապը «կովային աչքերով»[2] է նայում իր անդորրը խախտող «խենթին»:

Մյուս առնչակցությունը դրական ելքի մասին երազն է: Էպոսում գերեվարված Արմաղանը պատմում է իր երազն, ըստ որի «Միեր անունվոր կտրի՛ճ մի տ՚էլնի, Սիպտակ Դև տի սպանի ու ինձ ազատ անի էնոր ձեռքեն»[3]: Այս օրինակը եզակի չէ մեր էպոսում: Այսպես, երրորդ ճյուղում երազ է տեսնում Ձենով Հովանը.

Էսօր մեր քաղքի պարիսպ կայնե՛ր էր,
Մեր թազա բաղ կանաչեր էր,
Մեր ջահեր քաղքի պարսպին վառվեր էր,
Մեր բաղի պլպուլ կանչեր էր.
Կա չըկա, մեր որբ Դավիթ մեջ մեր հողին մտեր է[4]:

---

[1] Նույն տեղում, էջ 143:

[2] Կովը, արջառն առասպելաբանության մեջ ամպրոպային աստծու կենդանակերպ դրսևորումներն են, որոնք այլաբանորեն հանդես են գալիս բանահյուսական մի շարք ժանրերում:

[3] Նույն տեղում, էջ 112:

[4] Նույն տեղում, էջ 158:

Այլ օրինակներ ևս կարելի է բերել. եզրահանգումը միակն է՝ «Վիշապ» զրույցը հավատարիմ է ժողովրդական բանահյուսությանն ընդհանրապես և մեր էպոսին՝ մասնավորապես: Թե՛ մեկում, թե՛ մյուսում պատկերվում է հավերժական պայքարի և սպասումի գաղափարը. «խենթին» չի հաջողվում հաղթել վիշապին, իսկ Փոքր Միհրը փակվում է ժայռում:

Փափազյանի «Վիշապ» զրույցի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ անհատ-հասարակություն փոխհարաբերության աններդաշնակությունն է: Պատկերված է արատավոր շրջան կամ ավելի ճիշտ՝ մոգական եռանկյուն, որի գագաթներին համապատասխանում են՝ խենթը, որը հակադրվում է հասարակությանն ու վիշապին, գյուղացիները, որոնք ուզում էին սպանել վիշապին, սակայն վախից հնազանդվում են նրան՝ հակադրվելով խենթին, և ջրարգել վիշապը, որը, սպառելով մարդկանց կենսատու ջուրը, բարերար է ձևանում՝ թույլ տալով խմել իր շրթունքների անկյուններից թափվող ջրից և հորդորում քարկոծել իր դեմ ելած խենթերին՝ նրանց հայտարարելով մոլորեցնողներ և թշնամիներ: Այստեղ կարևոր է մարդ-բնություն, անհատ-հասարակություն, միֆ-իրականություն փոխհարաբերություններին առնչվող երկու դիտարկում՝ Կ.Յունգի և Ա.Գուլիգայի բնորոշումները: «Որքան գիտությունը զարգանում է,- գրում է Յունգը,- մեր աշխարհն այնքան ապամարդկայնանում է: Մարդը տիեզերքում իրեն մեկուսացված է զգում, քանի որ նա այլևս ներգրավված չէ բնության մեջ և կորցրել է իր հուզական «անգիտակցական ինքնության» կապը բնության հետ: Այս ամենի արդյունքում աստիճանաբար կորչում է երևույթների խորհրդանշական ներիմաստը: Ամպրոպը այլևս զայրացած աստծո ձայնը չէ, և ոչ էլ կայծակը՝ նրա ցասումը: Ոչ մի գետ այլևս հոգի չունի, և ոչ մի ծառ մարդու կենաց ուղին չի խորհրդանշում, ոչ մի օձ իմաստության մարմնացումը չէ այլևս, և ոչ մի լեռ ահռելի հրեշի բնակավայրը չէ»[1]: Գուլիգան կարծես շարունակում է նրա միտքը. «Սոցիալական տարերքի առջև ժամանակակից անտագոնիստական հասարակության մարդը շատ հաճախ նույնքան անզոր է, որքան վայրենին՝ բնության դեմ հանդիման: Եվ ինչպես վայրենին, նա կարող է այդ չգիտակցել: Լինել ստրուկ և համարել ինքն իրեն տեր. հենց այստեղ է թաքնված միֆական մտածողության գոյության հիմնական պատճառը մեր օրերում՝ նոր ձևավորվող արհեստական միֆերի տեսքով»[2]: Հենց այսպիսին է

[1] Jung C. G., Man and his symbols, USA, 1968, p. 85. Տե՛ս նաև Ա. Սեմիրջյան-Բեքմեզյան, Գրականություն և միֆ: Գրականության տեսության արդի խնդիրներ, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016, էջ 124-125:

[2] 2 Гулыга А., Пути мифотворчества и пути искусства, “Новый мир”, 1969, N 5, с. 220. Տե՛ս նաև Ա. Սեմիրջյան-Բեքմեզյան, Գրականություն և միֆ: Գրականության տեսության արդի խնդիրներ, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016, էջ 125:

Փափազյանի պատկերած հասարակությունը, որի՝ բռնության հանդեպ հանդուրժողականությունն ու հարմարվողականությունը հեղինակին հասցնում է ցասման: Հետագայում իր «Բանտային գրառումներում» հենց այս միտքն է արտահայտում նաև մեծ հայրենասեր Գարեգին Նժդեհը. «ժողովուրդներ կան, որոնք իրենց բացասօրէն մարդկայինը - իրենց նկարագրի ամենադատապարտելի թերիները, կենսաբանական անհրաժեշտութեամբ, ծառայեցնում են իրենց գոյութեան պաշտպանութեան: Հայը վաղուց է դատապարտել աշխարհաքանդ չարութիւնն իբրեւ պայքարի զէնք: Ի զուր են շները լիզում Արտաւազդի շղթաները - արթո՛ւն է հայ **դարբինը**: **Հայ էութեան այդ չարամերժ գիծը - որ պատիւ է բերում ենթակային - մեծապէս դժուարացրել է իր դարաւոր գոյամարտը** (Ընդգծումը մերն է՝ Ա.Բ.): Չարի ու բարու իր հասկացողութեամբ, դեռ այսօր էլ հայը մղւում է ամենայն անշահասիրութեամբ- անքաղաքագիտօրէն - դիրք ճշտելու մէկի թէ միւսի հանդէպ, առանց հաշուի առնելու գոյութիւն ունեցող առարկայական պարագաները: Իր այդ հոգեգծի պատճառով՝ նրա մտածողութիւնն ու արտաքին վարքագիծը ընդունել են ապաքաղաքական, որով եւ՝ անաշխարհայարմար բնոյթ»[1]:

Ինչ վերաբերում է թվերի խորհրդին, ապա «Վիշապ» զրույցում հանդիպում ենք հինգ և տասնհինգ թվերին, մինչդեռ բանահյուսության մեջ առավել տարածված են 3, 7, 9 և 40 թվերը: Հետաքրքիր է, թե ինչպես է մեկնաբանվում հինգ թվի խորհուրդը. «Բայց ինչու՞ հինգ խումբ,- գրում է Ա.Օհանյանը:- Պատահական թի՞վ է դա, թե՞ խորհրդանշում է որոնող մտքի թափառումները հինգ աշխարհամասերում, որպեսզի ընդգծվի, թե չարիքը համասփյուռ է և ամենուրեք՝ մի»[2]: Մեր կարծիքով՝ ամեն ինչ ավելի պարզ է. հինգը մարդու ձեռքի մատների խորհուրդն է, որ միավորվելով՝ բռունցք են դառնում, իսկ տասնհինգը, որի մասին լռում է Ա.Օհանյանը, հավանաբար կապված է լուսնային փուլերի հետ, մասնավորապես՝ խորհրդանշում է զարգացումը, աճը՝ նորալուսնից մինչև լրումը. «Տասնհինգօրյա երկար շրջագայությունից հետո բոլոր խմբերը կենտրոնացան ակունքի մոտ և խորհրդի նստան»[3]:

Արդեն նշել ենք Փափազյանի՝ Ռաֆֆուց կրած ազդեցության, ինչպես նաև «Վիշապ» և «Խենթը» գրվածքների՝ լավատեսական երազով ավարտվելու մասին: Սակայն եթե Ռաֆֆու հերոսը երազում որոշակիորեն տեսնում է ապագայի Հայաստանը՝ երկու հարյուր տարի անց, ապա

---

[1] Գ.Նժդեհ, Հատընտիր, 2006, էջ 352:

[2] Ա.Կ.Օհանյան, Վրթանես Փափազյան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1976, էջ 235:

[3] Վրթ.Փափազյան, ԵԺ հինգ հատորով, հտ. 3, Երևան, 1958, 366:

Փափազյանի մոտ դա անորոշ է. «…Մի օր հայտնվեցին մարդիկ, որոնք երազ էին տեսել, որ մոտ է, իբրև թե, հրեշի ոչնչանալու օրը… », և որ վիշապին սպանելու է «կաշվե գոգնոցով, կոշտացած խոշոր ձեռքերով և ձեռքին մի մեծ կռան բռնած» հուժկու մի մարդ, քանզի միայն նրանից էր վախենում վիշապը: Գրողը բնութագրում է նրան ընդհանուր գծերով, և առաջին հայացքից դժվար է կռահել, թե ով է նա: Այստեղ մեզ օգնության է գալիս Փափազյանի մեկ այլ գրվածք՝ «Զոհակ» պարսկական լեգենդը, որը համահունչ է քննվող զրույցին և պարզորոշ տալիս է վիշապին հաղթողի նկարագիրը. որն է դարբինը, և դա պատահական չէ: Հնդեվրոպական առասպելաբանության մեջ դարբինը երկնային ամպրոպային կրակի մարմնացումն է, վիշապին սպանողը, որը հանդես է գալիս կա՛մ իբրև ամպրոպային աստված, կա՛մ իբրև նրա օգնական[1]: Դարբինը կատարում է նույն գործառույթները, ինչ մյուս վիշապամարտիկները, «որոնք պայքարում են երկրին սպառնացող չար ուժերի՝ վիշապների դեմ, ազատագրում են արևն ու ջուրը՝ ապահովելով պտղաբերություն և բարգավաճում»[2]: Բայց նրան դեռ պետք է սպասել, և այս է Փափազյանի ամենամեծ մտահոգությունը:

Մի դիտարկում ևս. Շեքսպիրի թարգմանությունները քննող հոդվածներից մեկում կարդում ենք, որ խեղկատակ-գեղջուկ-գերեզմանափոր-փորող բառերի համար անգլերենն ունի միևնույն՝ clown բառը[3], և այդ բոլոր բնորոշումները կարծես համընկնում են Փափազյանի «խենթի» կերպարի հետ. նախ այն, որ գլխավոր հերոսը մի «խենթ» *գեղջուկ* է, որին միշտ *ծաղրում են* ու քարկոծում, մինչդեռ նա գիտի ճշմարտությունը և միայնակ գնում է աղբյուրի ակունքը *փորելու*, վիշապին գտնելու և սպանելու, եթե անգամ դա իր կյանքն արժենա: Արդյո՞ք սա զուգադիպություն է:

Փափազյանի երկերը շարունակ մտորումների տեղիք են տալիս, նրա հարցադրումները հռետորական են, ասելիքն ավելի խորը, քան կարելի է ենթադրել: Նա այլաբանության վարպետ է, մեծագույն հայրենասեր, ով ներկայի մասին իր ասելիքը համեմում է հնագույն հավատալիքների շուրջ հյուսված առասպելներով՝ դառնալով հայ գրականության մեջ նեոմիֆոլոգիզմի ակնառու ներկայացուցիչը: «20-րդ դարում գեղարվեստական ստեղծագործություններում նեոմիֆոլոգիզմը հանդես է գալիս հիմնականում հետևյալ դրսևորումներով. նախ, գրական դաշտ են ներմուծվում միևնույն միֆի զանազան ոճավորումներ՝ նրբերանգային վերաիմաստավորումներով…

---

[1] Мифы народов мира, т.2, Москва, 1982, стр.22.

[2] Լ.Ղռեջյան, Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության համակարգում, Երևան, 2012, էջ 53:

[3] Հովհաննիսյան Ս.Խ., Շեքսպիրի արդիականությունը, ԱԶԳ օրաթերթ – մշակույթ #7, 11-04-2014:

Ապա գեղարվեստական տեքստը թեմատիկ-գաղափարական ամբողջացման է հասնում մի քանի միֆերի համադրությամբ… Միֆը ստեղծագործությունների մեջ վերածվում է գաղափարական խաղի, այսինքն՝ միֆը ոչ միայն և ոչ այնքան փոխառվում է, որքան դառնում է գեղարվեստական տեքստի հյուսվածքը… Տեղի է ունենում ոչ այնքան դասական միֆի փոխառում, որքան դասականի ենթատեքստի վրա հիմնված նոր միֆի ստեղծում»[1]:

Վրթ.Փափազյանի «Վիշապ» ստեղծագործությունն իր տեսակի մեջ եզակի չէ, գրողը նախկինում ևս անդրադարձել է բանահյուսությանն ու արդիական թեմաները քննել այլաբանորեն, սակայն հենց «Վիշապում» են իրենց բարձրակետին հասել նախորդ ութ տարիների ընթացքում գրված ութ զույցներում արծարծվող գաղափարները: Դրանք իրենց համամարդկային բովանդակությամբ այսօր էլ պահպանում են իրենց արդիականությունը, ուստի 19-20-րդ դարերի սահմանագծին վերստեղծված միֆական պատկերների ըմբռնումը և արժևորումը ոչ պակաս կարևոր է նաև 21-րդ դարում քայլող անհատի համար:

Բանալի բառեր՝ *վիշապ, միֆ, գեղարվեստական գրականություն, խենթ, անհատ, հասարակություն, հակադրություն, այլաբանություն, պայքար, հանդուրժողականություն:*

Օգտագործված գրականություն

1.Հովհաննիսյան Ս.Խ., Շեքսպիրի արդիականությունը, ԱԶԳ օրաթերթ – մշակույթ #7, 11-04-2014:
2. Ղռեջյան Լ., Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության համակարգում, Երևան, 2012, էջ 53:
3. Նժդեհ Գ., Հատընտիր, 2006, էջ 352:
4. Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961:
5. Սեմիրջյան-Բեքմեզյան Ա., Գրականություն և միֆ: Գրականության տեսության արդի խնդիրներ, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016:
6. Փափազյան Վրթ., ԵԺ հինգ հատորով, հտ. 3, Երևան, 1958:
7. Օհանյան Ա.Կ., Վրթանես Փափազյան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1976:
8. Гулыга А., Пути мифотворчества и пути искусства, Новый мир, 1969, N 5.
9. Мифы народов мира, т.2, Москва, 1982, стр.22.

[1] Ա. Սեմիրջյան-Բեքմեզյան, Գրականություն և միֆ: Գրականության տեսության արդի խնդիրներ, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016, էջ 126:

10.Jung C. G., Man and his symbols, USA, 1968.

MYTHICAL IMAGES IN THE WORK "DRAGON" BY VRTANES PAPAZYAN

BAGOYAN ALLA
GSU lecturer

The tale“Dragon” by V. Papazyan is the author's protest against the evils of the society of his time, and the procrastination of their diminishment can lead to irreversible consequences. In his, at first glance simple, exposition and in a small volume the talented writer applied a whole arsenal of folk art, reflecting the theme of good and evil, personality and society, struggle and tolerance, unity, power, determination and so on. The purpose of the article is to identify the relationship of this work with mythological concepts, folklore, literature of the past and modern world.

Key words: *dragon, myth, fiction, crazy, individual, society, contrast, allegory, struggle, tolerance.*

МИФИЧЕСКИЕ ОБРАЗЫ В ПРОИЗВЕДЕНИИ ВРТАНЕСА ПАПАЗЯНА «ДРАКОН»

БАГОЯН АЛЛА
Преподаватель ГГУ

Сказ Врт. Папазяна «Дракон» - это протест автора против пороков общества своего времени, промедление борьбы с которыми может привести к необратимым последствиям. В простом, на первый взгляд, изложении и небольшом по объему произведении талантливый писатель, применяя целый арсенал народного творчества, отразил тему добра и зла, личности и общества, борьбы и терпимости, единства, власти, решительности и т.д. Цель настоящей статьи – выявить связь этого произведения с мифологическими понятиями, фольклором, а также с литературой прошлого и с современностью.

Ключевые слова: *дракон, миф, художественная литература, сумасшедший, индивид, общество, контраст, аллегория, борьба, толерантность*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 16.03.2019թ.:
Հոդվածը գրախոսվել է 12.04.2019թ.: